ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

9/47.925/
Մ- 99
4 979.

Մուրադյան, Հր.

Վարդան Մամիկոնյան

ՀԱՅՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(47.925) 14
Ս-99

ՀՐ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

116923

ՌՍՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԵՐԵՎԱՆ 1948

Սերիա՝ խմբագրությամբ ակադ. Հ. ՕՐԲԵԼՈՒ

Տպիկը՝ ճկարիչ Մ. Ե. ՄՈՆԻ

Իմացյալ մահը՝ անմահություն է։

Եղիշե

432 թվին պարսից Վռամ թագավորը զահընկեց արեց հայերի վերջին թագավորին՝ Արտաշեսին։ Հայերը զրկվեցին իրենց քաղաքական ինքնուրույնությունից, կորցրին այն, ինչ որ մի ժողովրդի գոյության գլխավոր նախապայմանն է։

Պարսից Սասանյան թագավորները վաղուց էին ձգտում այդ բանին։ Զինաթափ անելով և պետականությունից զրկելով այնպիսի մի ռազմիկ ժողովրդի, որպիսին հայերն էին, նրանք ձեռք էին բերում ուժերի զգալի գերակշռություն իրենց մյուս հակառակորդների նկատմամբ և ճանապարհ հարթում վրացիներին ու աղվաններին ևս նվաճելու համար։

Վռամի հաջորդը՝ Հազկերտ II բռնավորը՝

գիտենալով հայերի անհնազանդ բնավորությունը, տեսնելով նրանց մշտական ձգտումը դեպի Արևմուտք, ցանկացավ իր նախորդի ձեռք բերած առաջին հաջողությունն ամրապնդել երկրորդով, այն է՝ հայերին կրոնափոխ անելով՝ Հայաստանը վերջնականապես միացնել Պարսկաստանին և ժամանակի ընթացքում հայերին ձուլել պարսիկ ազգի հետ։

«Դուք ինքներդ գիտեք,—հորդորում է Հազկերտին նրա հազարապետ Միհրներսեհը, թե ինչ պիտանի երկիր է Հայաստանը, բայց կայսեր իշխանության սահմանակից է և նույն հավատն է պաշտում, ինչ որ հույները։ Բայց եթե դրանց մեր հավատին դարձնենք՝ այնուհետև կսիրեն ձեզ և արյաց երկիրը. և եթե հայերը մեզ հետ սերտ կապված լինեն, վրացիք ու աղվանները մերն են ու մերը»։ Այս նույն ոգով էին բռնակալին հորդորում նրա մոգերն ու մոգպետները։

Մտադրվելով իր տիրապետության տակ եղած քրիստոնյա ժողովուրդներին վերջ-

նականապես ձուլելու, Հազկերտը չէր կա-
րող հաշվի չառնել այնպիսի մի լուրջ ուժ,
որպիսին Բյուզանդիոնն էր, որի շահերը
պիտի պահանջեին արգելք հանդիսանալ
այդ ազգակուլ քաղաքականության:
Նշանակում է՝ պետք էր անսպասելի ու
ծանր հարվածով նախ չեզոքացնել հույնե-
րին և ապա ձեռնարկել իրագործելու հա-
յերի վերաբերյալ ունեցած մտադրությունը:

Այդպես էլ եղավ: Հազկերտը մեծ ու-
ժով հարձակվեց հույների վրա և ավեր ու
ավար ավերելով չորս կողմը, հասավ մինչև
Մծբին քաղաքը: Այդ անակնկալ և ծանր
հարվածով նա հունաց Թէոդոս II կայսրին
ստիպեց ընդունելու իր առաջարկած հաշ-
տության ամոթալի պայմանները:

Պարսկական արքունիքը վստահ էր իր
ձեռնարկության հաջողությանը մանավանդ
այն պատճառով, որ հայ իշխանների մեջ
կային այնպիսիները, որոնք պատրաստ էին
գործիք դառնալու թշնամու ձեռքին: Հայոց
մարզպան Վասակ Սյունեցին գլխավորում

էր դեպի Պարսկաստան կողմնորոշված հայ իշխանների խումբը։

449 թվին Հազկերտի հանձնարարությամբ Միհրներսեհը և մոգպետը հայերին ուղղված հրովարտակով պահանջում էին հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել պարսկական կրոնը՝ կրակապաշտությունը։ Հրովարտակի ընթերցումը, որ տեղի ունեցավ Արտաշատում՝ նախարարների և բարձրաստիճան հոգևորականության ժողովում, ունկնդիրների մեջ բուռն զայրույթ առաջացրեց։

Ժողովականների համար պարզ էր, որ ասպարեզի վրա էր դրված հայերի լինել-չլինելու հարցը։ Ազգային արժանապատվությունը վիրավորված մարդու, բուռն հայրենասիրի անհուն զայրույթով խոսեց հայոց զորքի սպարապետ Վարդան Մամիկոնյանը։ Նա խոր ու շրջահայաց քաղաքագետի սուր ու թափանցող մտքով իսկույն կռահեց, թե դեպի ուր է տանում պարսից արքունիքի այդ հրեշավոր քաղաքականությունը, ուստի պահանջեց ընդդիմանալ ար-

քունքի կամքին, իսկ հարկն ստիպելու դեպքում զենք վերցնել և զենքով պատժել հանդուգն թշնամուն։ Թեև Վասակ Սյունեցին ամեն ջանք գործ դրեց ընդունել տալու արքունիքի առաջարկը, սակայն ժողովականները հակառակը որոշեցին, և մի համարձակ ու վճռական նամակով արքային հայտնեցին իրենց մերժումը։ Այդ պատասխան-նամակում ասված էր. «Կա բան, որում պարտավոր ենք հնազանդվել քեզ, իսկ կա բան, որ ոչ դու պիտի պահանջես և ոչ մենք պիտի հնազանդվենք և հանձն առնենք»։ Արյունարբու բռնակալը, որ նման պատասխանի չէր սպասում, հայերի հանդգնությունից կատաղած՝ անմիջապես հրավարտակ արձակեց, որով առաջարկում էր հայ իշխաններին անհապաղ արքունիք ներկայանալ։

Մինչև բռնակալի ահեղ դատաստանին ներկայանալը՝ կանչված հայ իշխանները՝ Վարդան Մամիկոնյանը, Վահան Ամատունին, Ներշապուհ Արծրունին, Գաղիշո Խորխոռունին, արանց հետ և Վասակ Սյու-

նեցին, որ առժամանակ տեղի էր տվել ընդհանուր պահանջի առաջ, Արտաշատ քաղաքում՝ Հովսեփ կաթողիկոսի ներկայությամբ ուխտեցին կյանքով և մահով հաստատ մնալ իրենց որոշմանը։

Այս անգամ Տիզբոնում հայ իշխանների ընդունելության առթիվ սովորական ծեսերը չկատարվեցին։ Սովորաբար թագավորը նրանց դիմավորելու համար ուղարկում էր մի նշանավոր զորավարի, որը հարցնում էր հայոց աշխարհի ողջության և խաղաղության մասին։ Հայոց իշխանների պատվին զորահանդեսներ էին կազմակերպում։ Իսկ արքայական սեղանի շուրջը խմբվելիս՝ թագավորն ինքն էր նրանց կատարած ծառայությունների ու քաջագործությունների մասին զովեստի խոսքեր ասում։

Իշխաններին պալատում դիմավորեցին զայրույթի բացահայտ ցույցերով, իսկ երբ նրանք ներկայացան թագավորին, նա կատաղաբար գոչեց.

— «Երդվում եմ մեծ Աստված Արեգա-

կով, որ յուր ճառագայթներով լուսավորում է բոլոր աշխարհը և յուր տաքությունով կենդանացնում է բոլոր արարածներին, եթե էգուց առավոտ, սքանչելի արեգակի ծագելու ժամանակ, ամեն մինը ձեզանից ինձ հետ միասին ծունր չի դնիլ նրան և աստված չի ճանաչի... չարչարանքների բոլոր նեղությունները ձեզ ցույց կտամ, մինչև որ ակամա կատարեք իմ հրամանը»։

Բռնավորի հրամանով իշխաններին տարան բանտ։

Վարդանը հասկացավ դրության ամբողջ ծանրությունը։ Պարզ էր, որ իր հաղթանակներով հարբած արքան ոչ մի բանի առաջ կանգ չէր առնելու։ Հայկերտի համար դժվար չէր նախ ոչնչացնել ժողովրդի ղեկավարներին և ապա մեծաքանակ բանակներով խուժել երկիրը և հրով ու սրով իրագործել իր վայրագ դիտավորությունը։

Պետք էր մի կերպ դուրս գալ ծուղակից։ Իսկ դրա միակ միջոցը արքայի կամքը առերես կատարելն էր։ Վարդանի խելացի քա-

ղաքաղիտությունը դրությունը փրկեց։ Իշխանները որոշեցին առժամանակ հնազանդվել, սպասել հարմար առիթի, երբ հնարավոր կլիներ զենքի դիմել։

Հայ իշխանների դավանափոխության լուրը արևապաշտները լսեցին ցնծագին ուրախությամբ, իսկ քրիստոնյաները՝ խորին վշտով։ Բոլանդակ Հայաստանը, ինչպես նաև Վրաստանն ու Աղվանքը ոչ մի օրեր էին ապրում։

Արքայի կամքով հայ նախարարներն անմիջապես պիտի զորք անցնեին։ Նրանք իրենց հետ պիտի տանեին 700 մոգ և մի գունդ զորք, որպեսզի անհրաժեշտության դեպքում բռնի ուժով հարկադրեին ժողովրդին ընդունելու օտար կրոնը և լեզուն։

Մոգերի և պարսից զորքի մուտքը Հայաստան այնպես ալեկոծեց երկիրը, ինչպես փոթորիկից ծովը։ Նրանց առաջին իսկ քայլը ապետավոր եղավ իրենց համար։

Հասնելով Ծաղկան գավառի Անդդ ավանը, այստեղ իսկ մոգերը ցանկացան

փորձել իրենց ձեռնարկության հաջողությունը։ Մոդերի և զինվորների մի խումբ հարձակվեց տեղի եկեղեցու վրա։ Զբաղնելով ու բանելով զինված՝ նրանք սկսեցին քանդել ճարտարապետական գեղեցիկ կառուցվածքը։ Կայծակի արագությամբ լուրը տարածվեց ավանում և շրջակայքում։ Մի քանի րոպեում մեծ բազմություն հավաքվեց։ Ժողովրդական ցասումի կուտակման մի քանի ծանր րոպեներ անցան։ Ուռճացող, բարձրացող ցասման ահեղ ալիքը րոպե առ րոպե սպառնում էր ժայթքել։ Աղդանշանը եղավ մեկի աղաղակը.

— Երկիրն ավերում են, և ժողովուրդը հանդուրժում է։ Մահ թշնամիներին։

«Մահ թշնամիներին» — արձագանքեց ժողովուրդը և շարժվեց։ Ինչպես տաշեղի կտորները կուլ գնան ջրի ալիքներին, այդպես հոծ բազմության մեջ կուլ գնաց մոդերի ու զինվորների խումբը։ Բզկտված, տրորված և արյունվա այդ ավազակների մնացորդները հայ իշխանների պաշտպա-

նությանն ապավինելով՝ հաղիվ հազ գլուխ-
ները ազատեցին։

Ժողովրդական ցասման առաջին պոռթ-
կումն այնքան սաստիկ էր, որ թե՛ մոգերը
և թե՛ զինվորները միայն մի ցանկություն
ունեին՝ որքան կարելի է շուտ փախչել,
հեռանալ այդ ազետալի երկրից ու գործից։
Միայն Վասակ Սյունեցին էր, որ ամեն
կերպ քաջալերում էր թշնամիներին, չհու-
սահատվելու հորդորներ էր կարդում և ա-
պագա հաջողության հույսեր ներշնչում։

Իրականությունը, սակայն, հակառակն
էր ապացուցում։ Հայոց աշխարհը մի ծայ-
րից մինչև մյուսը, միևնույն վճռականու-
թյամբ ոտքի էր կանգնել։ Մոգերի ոչ մի ա-
ղաղաքն անպատիժ չէր մնում։ Ամենուրեք
նրանք մահվան սպառնալիքի տակ էին։
Ամեն՝ ձևով նրանց դեմ զենք էր վերցնում։
Այս ձախորդությունները մոգպետին ստի-
պեցին խոստովանելու, որ «եթե նույնիսկ
մեր սասվածները զան մեզ օգնելու, չի
կարելի մոգության օրենքը հայոց մեջ
հաստատել։ Եթե մեր աշխարհի բոլոր զին-

վորները ուզեր լինեին, սրանք չէին խնայիլ նրանց սատկացնելու։ Այն մարդիկ, որոնք ոչ կապանքից են վախենում, ոչ տանջանքից, ոչ մեծ պարգևներով են կաշառվում և, որ ամենից վատն է, մահը անարգ կյանքից լավ են համարում, ով կարող է նրանց դեմ կանգնել»։

Վասակի դավաճանական բոլոր միջոցները՝ սպառնալիքները, խոստումները ու կաշառքները չդադարեցրին ժողովրդական հուզումները։ Մոգերի կյանքն ապահովելու համար նա ստիպված եղավ առժամանակ նրանց ընակեցնել իր և իրեն կողմնակից մի քանի իշխանների դղյակներում, ուր և պարսիկ կրոնավորները քարոզում էին իրենց դավանանքը։

Հայաստանում ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Հազկերտը և նրա հազարապետ Միհրներսեհը այդպես հեշտությամբ հետ չեն կանգնի իրենց մտադրությունից։ Քուշանների կողմից հանկարծակի հարձակման ենթարկվելը նրանց խանգարեց ամբողջ ուժը կենտրոնացնել Հայաստանի վրա։

Սակայն շուտով նրանք պիտի փորձեին այդ անել։ Նշանակում է՝ պետք էր նախապատրաստվել գալիք ահավոր փոթորիկներին դիմագրավելու համար։ Ոտքի ելած ժողովրդի տարերային ուժը պետք էր կազմակերպել, համախմբել մի կենտրոնի շուրջ, ղեկավարել և վարժեցնել նրանց՝ դարձնելով կանոնավոր զորք։ Ո՞վ էր, սակայն, կանգնելու ժողովրդական այդ շարժման գլուխը, ո՞վ էր ընդունակ ազգը համախմբելու մի գաղափարի շուրջը, ձուլելու պողպատի ամրությամբ։ Դա ժողովրդից սիրված, նրա վստահությունն ու հավատարմությունը վայելող Վարդան Մամիկոնյանն էր։

Վարդանի առերես դավանափոխությունը ոչ միայն ոչինչ չէր փոխել նրա մեջ ի՛ջնաս հայ ժողովրդի շահերի, այլև նրան է՛լ ավելի նախանձախնդիր էր դարձրել հարազատ երկրի նկատմամբ։ Հայրենիք վերադառնալուն պես, երբ արդեն նրան հաջողվել էր իր հնարագիտությամբ հիմարացնել Հազկերտին և ազատվել նրա ճիրաններից, նա մի ընպե իսկ չէր մոռացել

ճշմարիտ հայրենասերի իր պարտականութիւնը։ Վարդան Մամիկոնյանն իր հավատարիմ մարդկանց հետ օր ու գիշեր դրծում էր ժողովրդի մեջ, հորդորում նրա ազգային եռանդը, զարթեցնում նրա գիտակցութիւնն ու արժանապատվութիւնը, մեկնաբանում թշնամու ձեռնարկած կրոնական հալածանքների քաղաքական իմաստն ու բովանդակութիւնը։ Վարդանի համար պարզ էր, որ հայերի գլխին կախված վտանգը ոչ միայն քրիստոնեական կրոնից զրկվելու վտանգն էր, այլև հայ ժողովրդի ազգությունն ոչնչանալու վտանգը։ Այդ ահավոր ճշմարտութիւնից էր սնունդ ստանում նրա անօրինակ հայրենասիրութիւնը, թշնամուն դիմադրավելու նրա վիթխարի կամքը։ Վարդանը ճանաչելով հայ ժողովրդին՝ անսրկմիտ հավատ ուներ նրա կամքի ու վճռականության հանդեպ։ Միայն պետք էր բացել ժողովրդի աչքն այդ ահավոր վտանգի առաջ։ Եվ ժողովուրդը ոչ միայն իրեն սպառնացող վտանգն էր տեսնում, այլև տեսնում էր այդ վտանգի դեմ

կանգնած Վարդանին, որ ինքնին արդեն համակ հայրենասիրություն էր։ Այդ պատճառով էլ Վարդանը, և ոչ մեկ ուրիշը, դարձավ ժողովրդի ընտրյալը, այն անձը, որին վստահվեց հայրենիքի բախտը՝ նրա համար ամենածանր ճակատագրական օրերին։

Հոգևորականությունը դիմեց դեպի Վարդանի ապարանքը՝ Շահապիվան։ Կանչվեցին նաև մյուս իշխանները, բացառությամբ Վասակի և նրա կողմնակիցների։ Կազմակերպվեց համազգային մի միություն։ Երկրի բոլոր կողմերից ամեն դասի, սեռի և հասակի պատկանող մարդիկ գալիս խմբվում էին Վարդանի դրոշի տակ։ «Այնուհետև տերը չէր երևում մեծ յուր ծառայից, փափկակյաց ազնվականները՝ նեղացած գյուղականներից և մինը մյուսից նվազ չէր երևում քաջության մեջ։ Թե տղամարդկանց, թե կանանց, թե ծերերի, թե չահելների սրտերը մի հոժարակամ կապով էին միացած»։ Բոլորին միացնողը ազգի գոյությանն սպառնացող մահացու վտանգն էր։ Այդ վտանգն էր, որ բոլորին մղում էր վճռա-

կան, անողոք մարտի։ «Բոլոր երեխայքը քաջ տղամարդկանց պես էին պատերազմում», «Մեկայն քաջությամբ մեռնենք», «Մենք պատրաստ ենք մեռցնելու և մեռնելու»— այս էր ամենքի խոսքն ու ցանկությունը։

Փնաած չէր նաև Սյունյաց Վասակը, որ նույնպես ուժեր էր հավաքում։ Նրան նույնիսկ հաջողվեց, մինչև Վարդանի ու նրա կողմնակիցների միաբանվելը, զգալի ուժեր հանել և տիրել երկրի մի շարք կարևոր գավառների։ Ամեն տեղ նա բռնությամբ ավերում էր եկեղեցիները և նրանց փոխարեն կանգնեցնում կռատներ, ժողովրդին մահվան սպառնալիքով դավանափոխ էր անում, իսկ ավելի արիներին սոսկալի տանջանքներով սպանում։

Այդ հալածանքները, սակայն, կարճաև եղան։ Վարդանի ուժի առաջ ընկճվեցին ինչպես պարսից, այնպէս էլ նրանց օգնող Վասակի զորքերը։ Կարճ ժամանակամիջոցում կռապաշտության քարոզիչները հալածվեցին ու նրանց հետ կապված հիշա-

Ա 6923
49764

տակները ոչնչացան։ Վասակը ամոթալի պարտություն կրեց և դերի ընկավ։ Խորամանկ ազվանը թակարդ ընկավ երկու ոտքով։ Սակայն բարոյական կերպարանքը կորցրած այդ ազգուրացն այժմ սկսեց իր հակառակորդների ոտքերը լիզել, մեղադրել և հավատացնել, որ հավատարիմ կմնա ազատագրական պայքարի սրբազան ուխտին։ Թեև նրա երդումներին շատ էլ չէին հավատում, բայց որոշվեց մի անգամ ևս հնարավորություն տալ նրան մաքրելու իր վրայից դավաճանի ամոթալի անունը։ Մնացած բոլոր իշխանները, որոնք կամա թե ակամա անցել էին Վասակի կողմը, ինքնակամ եկան մտան Վարդանի դրոշի տակ։

Վարդանի հաղթանակը կատարյալ էր։

Մինչ երկրի ներսում Վարդանը մեծամեծ հաղթանակներ էր տանում, լուր ստացվեց, որ պարսկական զորքերը Ճորա մարզպան Սեբուխտի առաջնորդությամբ 300 մոգերով ուղարկվել են Աղվանից երկիրը, որոնք պետք է բռնի ուժով դավանափոխ

անեին ժողովրդին՝ և ապա անցնեին Հայաստան։

Ազվանների թագավորը, որ հայ և վրաց իշխանների հետ Տիզբոն էր կանչված, պահվում էր այնտեղ իբրև պատանդ։ Երկիրը կատարելապես անտեր էր մնացել։ Վարդանը որոշեց պարսից զորքը ոչնչացնել մինչև Հայաստանի հողի վրա ոտք դնելը։ Հայոց զորավարն իր զորքերը երեք մասի բաժանեց. առաջին գունդը հանձնեց Ներշապուհ Արծրունուն և ուղարկեց Ատրպատականի կողմը, որ Հայաստանի սահմանը պարսիկներից պաշտպանի, երկրորդ գունդը հանձնեց Վասակին՝ երկրի ներքին նահանգներն ապահովելու համար, ինքը մնացած զորքի գլուխն անցած՝ Վրաստանի վրայով ուղևորվեց դեպի Ազվանից երկիրը։

Սերուխանը Վասակից ուղարկած բանբերից իմանալով Վարդանի զորքի փոքրաթիվ լինելու մասին, համարձակ դիմավորեց նրան։ Թշնամի բանակների հանդիպումը տեղի ունեցավ Կուր գետի մոտ՝ Ազվանից սահմանի վրա։ Թշնամու մեծաքանակ

զրբքից հայոց փոքրաթիվ բանակը չսասանվեց։ Սմեն մի հայ զինվոր մոնելով Վարդանի դրոշի տակ, իրենից վանել էր մահվան երկյուղը և պատրաստ էր հանուն հայրենիքի հերոսաբար զոհվելու։ Պատերազմից առաջ Վարդանը քաջալերիչ խոսքերով դիմեց իր զինվորներին, որոնց զրաավարը լինելով հանդերձ, միաժամանակ նրանց հոգատար հայրն էր։

— Թեև թշնամիները քանակով մեզնից ավելի են, բայց մենք նրանցից հզոր ենք։ Նրանց առաջ է մղում հափշտակության ատոր կիրքը, իսկ մեզ ուժ է տալիս հայրենիքի պաշտպանության սրբազան գաղափարը։ Նրանք պիտի մեռնեն որպես ավազակներ, իսկ մենք պիտի զոհվենք իբրև հայրենիքի սուրբ նահատակներ։ Նրանք սարսափով պիտի փախչեն մահվանից, իսկ մենք համարձակ կդնանք նրան հանդիմանելու։ Որովհետև մենք կռվում ենք ոչ թե անձնական փառքի կամ շահի համար, այլ կռվում ենք մեր հայրենիքի կյանքի համար։

Սիրելի զորավարի խոսքերից քաջալերված և նրա ռազմական հմտությանը վստահ՝ հայոց զորքը շարժվեց։ Մբրիկի ուժով նա զարկեց պարսից բանակի աջ թևին և ջարդելով ու մնացորդներին փախցնելով դեպի ձախ, ժամանակ իսկ չտվեց ուշքի գալու։ Խուճապահար բազմությունը սրի կերակուր դարձավ։ Նրանց մնացորդները խեղդվեցին Հոփանս կոչվող գետում, որովհետև աղվաններին, իրախուսված հայերի օրինակով, զենք էին վերցրել և փակել թշնամու փախուստի ճանապարհը։

Պարսկական բանակի հիմնական ուժերը ոչնչացնելուց հետո Վարդանը հարձակվեց աղվանների այն բերդերի ու քաղաքների վրա, որոնք թշնամու տիրապետության տակ էին գտնվում։ Ամեն տեղ վերացվեցին պարսիկների վայրագության հետքերը։ Երկիրը նորից ազատ շունչ քաշեց։ Թշնամու սարսափից ցրիվ եկած ժողովուրդը հավաքվեց։ Նրանցից շատերը մտան Վարդանի բանակի շարքերը՝ կռվելու նույն սուրը գործի համար, որի համար կռվում

էին հայերը։ Վարդանն իր հաղթական բանակով շտապեց օգնություն հասնել մի ուրիշ ժողովրդի ևս՝ հոներին։ Նրանք նույնպես հեծում էին պարսիկների լծի տակ։ Այդ արշավանքը նույնպես ավարտվեց արագ և հաջող։ Հայոց մեծ զորավարի հաղթանակների լուրը պարսկական բանակների մեջ մահվան սարսափ էր տարածել։ Պարսից զորքերը Վարդանի բանակի հարվածների տակ խորտակվում էին խարխուլ պարիսպների պես։ Վարդանի արագորեն ձեռք բերած մեծ հաղթանակները բարեհաջող ապագա էին գուշակում ոչ միայն հայերի, այլև մյուս ճնշված ժողովուրդների՝ վրացիների ու աղվանների համար։ Պարսկական բռնակալության դեմ ստեղծվեց եղբայրական ժողովուրդների մի սերտ միություն։ Այդ միության հիմքը ժողովուրդների ընդհանուր շահն էր ընդհանուր թշնամու՝ արյունարբու Հազկերտի դեմ։

Սակայն շուտով մի բոթաբեր հասավ հոների երկիրը և Վարդանին հաղորդեց, որ

Վասակը կրկին դրժել է կնքած դաշնը և դավեր է նյութում Վարդանի ու դաշնակիցների դեմ։ Վարդանը զայրացավ ազնիվ հայրենասերի արդար և բուռն զայրույթով...

Մեծամեծ հաղթանակներով պսակված Վարդանի վերադարձի լուրն իմանալուն պես Վասակը և իր կողմնակիցները մի դիշերվա մեջ խապտռ չքացան։ Նրանք իրենց զորքերով ամրացան անառիկ բերդերում։ Բայց և այնպես նրանք ազատ չմնացին Վարդանի ցասումից։ Վարդանի զորքերը հասան Սյունիք, խլեցին դավաճանի զորքերի պաշարները և սովի մատնեցին նրա բանակները։ Ջարդեցին և ցրեցին նրա կողմնակիցներից շատերին։

Վրա հասավ ձմեռը։ Սառժամանակ կրքերը հանդարտվեցին։ Այդ ժամանակամիջոցում Միհրներսեհն արքունի զորքով եկավ և բանակ դրեց Փայտակարան քաղաքում։ Վասակը, որ խաղալիք էր դարձել պարսկական արքունիքի ձեռքին, Միհրներսեհի կեղծ ու պատիր խոստումներով՝ ապագայում Հայաստանի թագավոր դառնալու հույսերով այն-

պես հրապուրվեց, որ հանձն առավ գործ դնել ամեն ստորութիւն քայքայելու համար հայերի միաբանութիւնը, ինչպես և մյուս քրիստոնյա ժողովուրդների հետ ունեցած նրանց դաշինքը։ Մինչ պարունը կբացվեր, Վասակը սկսեց իր քայքայիչ աշխատանքը։ Չխորշելով ոչ մի միջոցից՝ կեղծելով, զրպարտելով, կաշառելով, խոստումներ տալով, որոգայթներ լարելով, սպառնալով, նա կարողացավ Վարդանի զինակիցների որոշ մասը նրանից հեռացնել։ Նա կարողացավ գործի անհաջողութեան հեռանկարով վախեցնել և հուսահատեցնել վրացիներին ու աղվաններին և այդ կերպ քայքայել ազգերի դաշինքը։ Վարդանի և նրա ձեռնարկութեան մասին Բյուզանդիոն գրած զրպարտութիւններով լի մի շարք նամակներով նրանց համակրանքն էլ փոխեց հակակրանքի։ Մանրամասն տեղեկութիւններ ունենալով Վարդանի բանակի, նրա զորավարների, նրանց քաջութեան, կռվելու եղանակի մասին՝ աջակցեց պարսիկներին

հայերի դեմ հնգապատիկ գերազանց ուժեր նախապատրաստելու։

Բոլոր անհրաժեշտ նախապատրաստութիւնները տեսնելուց հետո՝ Միհրներսեհը բանակի գեկավար նշանակելով Մուշկան Նիսալէուրին և հանձնարարելով նրան ամեն բանում հետևել Վասակի խորհուրդներին, ինքը վերադարձավ արքունիք։

Գարուանը բացվելուն պես պարսկական զորքն առաջ շարժվեց դեպի Հայաստանի սահմանամերձ գավառները՝ դեպի Հեր և Զարևանդ՝ մահ ու աղետ սփռելով իր առաջընթացի ճանապարհին։

Վարդանը պարզ տեսնում էր, որ մոտենում է հայերի համար օրհասական ժամը։ Նորը զգալով ազգի ու երկրի գեկավարի իր պատասխանատվությունը սերունդների առաջ, նա պետական մարդու ամբողջ զգուշությամբ կշռադատում էր իր յուրաքանչյուր գործողությունը, աշխատում ճիշտ նախատեսել իր յուրաքանչյուր քայլափոխի մերձավոր ու հեռավոր հետևանքները։

Վարդանի կոչով հայ նախարարները հավաքվեցին Արտաշատ քաղաքում։ Կազմվեց 66 հազարանոց մի բանակ։ Պարսկական զորքը հասել էր Արտազ գավառը, երբ Վարդանը կանգնեց նրա ճանապարհին։ Թշնամի զորքերը բանակներ դրին Ավարայր գյուղի դաշտում՝ Տղմուտ գետի հակառակ ափերին։ Այդտեղ դրուժան Վասակը պատգամավորի միջոցով մի անգամ ևս փորձեց հուսահատեցնել հայերին, սակայն իզուր, Վարդանի զինակիցները հաստատ էին իրենց երդումին։ «Թող մենք մեռնենք, բայց թող ապրի հայրենիքը»,— այս էր նրանց միակ և միահամուռ վճիռը։

451 թվի հունիսի 2-ին, Տղմուտ գետի հակառակ ափին, հակառակորդ բանակներն զբաղված էին ուժերի դասավորումով։ Մուշկան Նխալավուրան իր զորքերը համախմբում էր փղերի շուրջը, յուրաքանչյուր փղի հետ դնելով 3000 զինվոր։ Գնդերը կազմելուց և իշխաններին դրանց վրա հրամանատարներ նշանակելուց հետո, նա նորից ու նորից նրանց հիշեցրեց իրենց պարտակա-

նությունն արքայից արքայի հանդեպ, հիշեցրեց քաջերին սպասող հարկն ու պատիվը, վախկոտներին սպառնաց սոսկալի պատիժներով։ Օրինակ բերեց հայերի քաջությունը և մահվան հանդեպ երկյուղ չունենալը։

Այդ նույն միջոցին գետի մյուս ափին Վարդանն իր գնդերն էր կազմում, իր զորքերը դասավորում և զորապլուխներ նշանակում։ Նա իր զորքը բաժանեց չորս գնդի. առաջին գունդը հանձնեց Ներշապուհ Արծրունուն, երկրորդը՝ Խորեն Խոռխառունուն, երրորդը՝ Թաթուլ Վանանդեցուն, չորրորդ գունդը վերցրեց ինքը, օգնական առնելով Արշավիր Կամսարականին և իր եղբայր Համազասպին։

Երբ բանակը կազմ ու պատրաստ էր, զորավարը դիմեց նրանց հետևյալ խոսքերով.

«Իմ քաջ զինակիցներ,—խոսեց Վարդանը,—ձեզանից շատերը քաջությամբ բարձր եք ինձանից, բայց երբ դուք ձեր հոժար կամքով առաջնորդ ու զորապլուխ եք կար-

գել ինձ, թող ախորժալի ու հաճելի թվան իմ խոսքերը ձեր ականջին։ Զվախենաք, չսարսափեք թշնամու բազմությունից և նրա սրի դեմ թիկունք չդարձնեք։ Մենք երկու-երեք կռիվների մեջ քաջության անուն ժառանգեցինք և թշնամու զորքն անխնա կոտորեցինք, մոգերին սատկեցրինք զանազան վայրերում, կռապաշտության պղծությունը սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը ոնտատակ տվինք, այդպիսով ծովի խռովությունը հանդարտեցրինք, լեռնացած ալիքներն իջան, դաշտացան, բարձրադեզ վերփուրն ապառվեց, իջավ թշնամու գաղափած կատաղությունը։ Նա, որ ամպերի վրայից էր որոտում, խնդճացավ, խոնարհվեց, նա, որ լոկ բանավոր հրամանով ցանկանում էր կատարել իր չարությունը, այժմ աղեղով ու նիզակով, սրով է կռվում։

«Վատահ եղեք ձեր անկասկածելի զորագլխի վրա, որ երբեք չի մոռանա ձեր քաջագործությունը։ Ո՛վ քաջեր, երկյուղը թերահավատության նշան է, թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզա-

նից. թող այժմ երկյուղն էլ փախչի մեր մտքից ու խորհրդից»։

Ռազմի ոգին մոլեգնեց հայ զինվորների սրտերում։ Պարսից զորքը չհամարձակվեց դեռն անցնել, այնինչ հայոց հեծելազորը շանթի պես սրարշավ անցավ գետը և մեխվեց թշնամու բանակի սիրտը։ Հետևակը նույնպես մարտի նետվեց՝ հարվածելով աջից և ձախից։ Երկու կողմից տասնյակ հազար զինավառ մարդիկ իրար մեռցնելու ամենի կրքով բախվեցին։ Մարդկային աղաղակները, բազմաթիվ սրերի, նիզակների և դրահների իրար զարնվելն այնպիսի աղմուկ էին տարածում շուրջը, որ այրերն ու ձորերն անգամ զզրդում էին։ Հազարավոր սրերի ու նիզակների հարվածներից մարդիկ գետին էին թափվում ինչպես գերանդիով հնձված հասկեր։

Վարդանը ոչ միայն իր զինվորների շարքերում մարտնչում էր իբրև շարքային զինվոր, այլև բազմափորձ զորավարի ուշիմ հայացքով հետևում էր ճակատամարտի ամբողջ ընթացքին և ուր որ պետք էր՝ իր

քաջությամբ ու ռազմական հմտությամբ խիզախ օգնության էր հասնում։

Կռվի ամենաթեժ պահին ուշիմ զորավարը նկատեց, որ պարսից զորքերի մի մեծ բազմությունն գրոհեց հայերի ձախ թևի վրա։ Արագ և վճռական գործողությամբ պետք էր խափանել թշնամու դիտավորությունը։ Իրեն հատուկ սատակությամբ նա հարձակվեց թշնամու վրա և ջարդելով հակառակորդի աջ թևը, փախցրեց մինչև Մատյան գունդն ու ցրեց նրա մարտական կարգը։ Թշնամու զորքերի մեջ խուճապ առաջացավ, ոմանք փախուստի դիմեցին, սակայն նրանց օգնական ուժերը վրա հասնելով՝ շրջապատեցին հայոց զորավարին։ Հասավ օրհասական ժամը։ Վարդանի կտրիճները մարտնչում էին սասնապատկված ուժերով։ Նրանցից յուրաքանչյուրը մինչև նահատակվելը գետին էր գլորում թշնամու բանակին պատկանող բազմաթիվ կռվողների։

Վարդանի շուրջը թշնամու դիակների կույտեր էին գոյացել, նրա սուրը և նիզակը մահ էին սփռում աջ ու ձախ։ Բայց հենց

այստեղ էլ անարգ թշնամու ձեռքով նահատակվեց քաջ Վարդանը։

Վրա հասավ երեկոն, պատերազմն ավարտվեց։

Այդ օրը Վարդանի հետ միասին զոհվեցին՝ հավանաբար շինականները չհաշված՝ հազար երեսունվեց հայ քաջեր, այդ թվում՝ Խորեն Խոռխոռունին, Արտակ Պահլավունին, Հմայակ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Վահան Գնունին, Արսեն Ընծայեցին և Գարեգին Սրվանձտյանը։

Թշնամու կորուստը եռապատիկ էր։ Պարսիկներից ընկան երեք հազար հինգ հարյուր քառասունչորս մարդ, որոնցից ինը զորավար։

Ինչպես մեծ պատմիչ Եղիշեն է ասում,— «Ոչ թե մի կողմը հաղթեց, իսկ մյուս կողմը հաղթվեց, այլ քաջերը քաջերին պատահելով, երկու կողմը ևս պարտություն խոստովանեց»։

Հունիսի 2-ի հայտնի ճակատամարտով պատերազմը չվերջացավ։ Հայոց զորքերն այնուհետև անցան պատերազմական նոր

տակտիկայի՝ պարտիզանական կռիվների։ Նրանք ամրանալով բերդերում, անառիկ լեռներում և անտառներում, անընդհատ հարձակումներ էին գործում ինչպես Հայաստանում գտնվող պարսից բանակի վրա, այնպես էլ արշավանքներ էին կատարում դեպի բուն Պարսկաստան։ Թշնամուն հասցրած հարվածներն այնքան սաստիկ էին, պարսից զորքի դրությունն այնքան տագնապալի էր, որ Մուշկան Նիսալավուրը շտապեց գործի իսկական վիճակը հայտնել արքունիք, իր բոլոր ձախորդությունների համար պատճառ բռնելով Վասակին։

Գոռոզ և անբարտավան Հազկերտը զբաղվեց։ Նա շտապեց ուղղել իր «սխալը»։

Շուտով հրաման ուղարկվեց Մուշկան Նիսալավուրին դադարեցնելու պատերազմական գործողությունները։ Դառը փորձով Հազկերտ բռնակալը համոզվեց, որ իր ձեռնարկությունն անմտություն է։ Նման անմիտ և անպտուղ փորձեր էին արել նաև նրա նախորդները՝ Շապուհ II-ը և Հազկերտ I-ը։ Այս ամենը մի բան էր ապացուցում,

այն, որ անհնարին է ընկճել մի ժողովրդի, որը արդեն էր հաստատել իր գոյության պատմական իրավունքը։ Հիրավի, ինչո՞ւմն էր հայերի անպարտության գաղտնիքը. այն միասիրտ ու միահամուռ դիմադրության մեջ, որ նրանք հանդես բերեցին ընդդեմ իրենց մահացու թշնամու։

Ինչպես միշտ, այս անգամ էլ հայ ժողովուրդն առաջնորդվեց բարեկամին սիրով, թշնամուն արդեն արդար սկզբունքով։ Արդար կռվի համար մերկացրած սուրն ահեղ է ու անողոք։ Այդ արդար և անողոք սրով Վարդան Մամիկոնյանը պաշտպանեց իր հայրենիքը։ Իսկ դավաճան Վասակ Սյունեցին իր «ծառայությունների» վոխարեն ոչ թե հայերի վրա թագավոր կարգվեց, այլ ամոթալի մահվան դատապարտվեց հենց նույն Հաղկերտ բռնակալի ձեռքով, և վատակեց սերունդների արհամարհանքն ու նախատինքը։

Մեռավ Վարդանը, բայց ապրում է Հայաստանը, ապրում է հայ ժողովուրդը, և նրա մշտաբաբախ սրտում հավերժորեն

կապրի Վարդանի ու նրա քաջերի հիշատակը։

Հայ ժողովուրդը երախտագետ ժողովուրդ է։ Միշտ էլ նա արժանի հարկ է հատուցել իր երախտավորներին, իր հերոս զավակներին, պարծեցել է նրանցով, փառաբանել և մեծարել է նրանց։ Վարդանի անունը թերևս ամենաժողովրդականն է բոլոր ակնառոր հայ անուններից։ Հայ գրականության և մասնավորապես պոեզիայի էջերը հարուստ են հերոսին փառաբանող գողտրիկ բանաստեղծություններով։ Հիշենք Ղ. Ալիշանի «Պլպուլն Սվաբայրի»-ն, Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, մանավանդ այդ պոեմի «Վարդանի երգը» հատվածը, Ս. Ծերենցի «Քաջ Վարդանը», Աշուղ Զիլանու «Քաջն Վարդանը» և այլն։ Բոլոր այդ բանաստեղծությունները, իբրև մեր ժողովրդի նվիրական զգացմունքների հարազատ ծնունդ, դարձել են նրա սիրած երգերը և անցած սերունդների մեջ կռփել հայրենասիրական վսեմ զգացմունք։

Ռափայել Պատկանյանի «Վարդանի երգ»-ի մեջ մեր առաջ բարձրանում է հայրենիքի քաջակորով զինվորը իր ամբողջ վեհությամբ։ Անձնազոհ պայքարի հրավիրող նրա հրաբորբոք խոսքերը հնչում են իբրև հերոսական սխրագործությունների մարտական կոչեր.

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ մեր թշնամին իր սուրն է գլխիս,
Իր օրհասական սուրը մեր կըրծքին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին.
Աստուծք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքից էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կլռեց,
Վա՛յ մեզ, շղթայով կապած գերի ենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Ելքը զոհզությամբ լցրած իր հոգին,
Արդարության ձայնն հանած իր սրտից
Արտաքսում է մեզ մեր ընտիկ երկրից,
Պանդուխտ, հալածյալ, եղբարք, ո՞ւր գիմենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք՝ մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խոսեն.
Չե՞ն ասիր, որ հայք արժանի էին
Այդ սարսափելի անարդ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնյաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռե մուենջը, անդամալուծը,
Կամ՝ որոց քաղցը է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք —
Ու այնպես լռենք։

Կամ կյանք ազատության մեջ, կամ մահ՝ այս է հերոսի եզրակացությունը։ Ազնիվ հայրենասերի համար այդ վիճակից այլ եզրակացություն էլ չէր կարող բխել։

Ազգային անմահ հերոսի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած սիրո ջերմ ու անմիջական արձագանք է Ս. Ցեբելեկյանի «Քաջ Վարդանը».

Իմ հայրենյաց արև Վարդան,
Հոգիս հոգվույդ եղնի զուրբան.
Որ Տրմուռի ափերի քով
Վաթսուն հազար կարիճներով

Զարկէր, զարկվար, ինկար քաջ-քաջ,
Պարսիկ սիռած ի ձախդ ու աջ։
Իմ հայրենյաց արև Վարդան,
Հոգիս հոգվույդ եղնի զուրբան։

Արյունդ կարմիր-կարմիր թափվավ,
Դաշտն ու պարտեզ ներկըվեցավ,
Լուսնյակն ելավ ամպի տակից,
Պաղ-պաղ թափեց ցողիկն աչից,
Որ հայրենյաց վարդեր բացվին,
Երգեր պլպուլ դրախտի սարին։
Իմ հայրենյաց արև Վարդան,
Հոգիս հոգվույդ եղնի զուրբան։

Սակայն, այս բոլորից առաջ և այս ամենից ավելի, Վարդան զորավարի փառքն ու հռչակը սերնդե սերունդ ավանդել է մեծ պատմիչ Եղիշեի գիրքը Վարդանանց պատերազմի մասին։

Եղիշեն եղել է այդ պատերազմի ականատեսը։ Իբրև ստեղծագործական վիթխարի կարողություններով օժտված հայրենասեր երգիչ, նա բուռն խանդով փառաբանել է Ավարայրի հերոսին։ Եղիշեի անմահ գիրքը բոցավառ հայրենասիրության անսպառ աղբյուր է հանդիսացել սերունդների համար։

Այսպես է ստեղծվում իսկական ժողովրդական հերոսի անմահ փառքը։

Մահ կա, որ հաղար կյանք արժե։ Դա հերոսական մահն է։ Ահա այդպիսի հերոսական մահ ընդունեց Վարդան Մամիկոնյանը և հենց դրանով էլ անմահացավ։ Վարդան Մամիկոնյանը բառի բուն իմաստով ժողովրդական հերոս է։ Նա գլխավորեց ոչն արքաղան պատերազմը, որը պետք է վճռեր հայերի լինել-չլինելու հարցը։ Վարդան Մամիկոնյանն անհողդողդ մնաց իր դիրքերում։ Նրա հետ դնաց ժողովուրդը, որի տարրեր հատվածներին նա կարողացավ ձուլել պողպատի ամրությամբ, ազգային շահերի միասնության գիտակցությամբ։

Սովետական ժողովրդի Հայրենական պատերազմի այս վեհ օրերին, Վարդան Մամիկոնյանի հերոսական կերպարը կանգնում է մեր առաջ որպես սիմվոլ հայրենասիրության և անձնազոհության և իր օրինակով մեզ մղում դեպի վերջնական հաղթանակ ֆաշիզմի դեմ։

Армянский Филиал Академии Наук СССР

Боевые подвиги сынов Армении

ГР. МУРАДЯН

ВАРДАН МАМИКОНЯН

(На армянском яз.)

Изд. Армфан. Ереван, 1943

ՎՁ 00700, պատվեր 82, տիրաժ 4000.

Ստորագրված է տպելու 10 մարտի 1943 թ.

ՆԳԺԿ Տնտեսագիտության տպարան, Երևան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0043254

[104]

ԳԻՆԸ 1 Ռ.

I
1923